ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

---- հոկտեմբերի 2009 թ. N ---Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՎԻՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի N 13-Ա որոշումը և Երևանի քաղաքապետի առաջարկությունը, ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի 4-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1.Երևանի վարչական շրջանների ղեկավարներին պատվիրակել Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Երևան քաղաքի քաղաքային նշանակության գովազդային և քաղաքաշինական գոտիները սահմանելու մասին» N 13-Ա որոշմամբ սահմանված Երևան քաղաքի քաղաքային նշանակության գովազդային գոտում (քաղաքային նշանակության փողոցներում և դրանց անմիջապես հարող տարածքներում, ինչպես նաև քաղաքային նշանակության հրապարակներում և այգիներում) «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին համապատասխան արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն տալու լիազորություն:

2.Սույն որոշման 1-ին կետով Երևանի վարչական շրջանների ղեկավարներին պատվիրակված լիազորության կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ.ԲԵԳԼԱՐՅԱՆ

Նախաձեռնության հեղինակ՝ Երևանի քաղաքապետ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՎԻՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է Երևան քաղաքում արտաքին գովազդ տեղադրելու հետ կապված հարցերը առավել արդյունավետ և սեղմ ժամկետներում կարգավորելու անհրաժեշտությամբ, ինչպես նաև այն հանգամանքով, որ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություններին վերաբերող ամբողջ բազան գտնվում է նախկին թաղապետարաններում՝ լիազորության կատարման նկատմամբ հսկողությունը թողնելով Երևանի քաղաքապետարանի համապատասխան ստորաբաժանումների, իսկ վերահսկողությունը՝ Երևանի քաղաքապետի վրա:

Վերոգրյալի հիման վրա Երևանի ավագանու քննարկմանն է ներկայացվում է սույն որոշման նախագիծը:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՎԻՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևանի ավագանու «Երևանի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություն պատվիրակելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման կամ այլ որոշումներում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ